

Սիբաս Բիւրաս
Կոմիտէի «Փիւնիկ», Ի
Ալեքսանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Ղր.՝
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՏԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՅԿ Է
Ձեռագիր ետ-հար-
մո՛ւ Է

ՓԻՒՆԻԿ

Կը ծախուի ՄԷԿ դրուս ողջի

ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ԱՐՏԱՍՈՒՄ
Ձր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՏԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Բոյլ. 6
Ազդեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով.

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

19 ՅՈՒՆԻՍ 1902

Թիի 5

ՄԵԾ ՄԵԹԻՆԿԸ

Փիւնիկի ներկայ 15 ամսաթիւով երեցած Բ. Յաւելուածով ծանուցուած ՄԵԾ ՄԻԹԻՆԿԸ տե՛ր ունեցաւ ամսոյս 16ին չորեքշաբթի գիշերը ժամը 9ին և տեղեց մինչև կէս գիշեր:

Գեր, Հայր Բարթողիմէոս վարդապետ Թագաճեան, Ձեթունի գիւղ Փռնուզի Ս. Կարապետ վանքին քաղարի վանահայրը, որ հիւրաբար քաղաքիս մէջ կը գտնուի 4 տարիէ ի վեր, Միթինկին Կարգազիր Յանձնախումբին Նախագահ Ազ. Տիար Տօթթօր Տ. Է. ի հրաւերով և երկսեռ ներկայից խանդավառ ծափերով ու կեցցէներովը Միթինկին Նախագահ ընտրուելով՝ բազմեցաւ բեմը դրուած թիկնաթոռը, շրջապատուած Կարգազիր Յանձնախումբին բոլոր անդամներէն ու նոյն գիշերուան բանախօսներէն:

Գեր. Նախագահը բացաւ Միթինկը, մէկ երկու բառով բացատրելով անոր նպատակը: Յետոյ բեմ եկաւ

Տիար Ա. Ճիգմէճեան-քաղաքիս անգլիական Էնիթըն կաթիք օրաթերթին խմբագիրներէն մին — և սկսաւ իր բանախօսութիւնը. Պրիսխէշի Գօնկրէին նշանակութիւնը:

Յարգելի բանախօսը պատմեց մեզի շարժառիթն ու պարագաները գօնկրէին գումարման, ու զայն կազմակերպող քաղարի անձնաւորութեանց անունները մէկիկ մէկիկ յիշատակելով, ի վեր հանեց Բրօ Արմենիաի գերազանցապէս օգտակար դերը՝ մեր գաւթին ի նպաստ հանրային կարծիքը պատրաստելու և անոր յաջող լուծումը փութացընելու կրկին տեսակէտներով:

Անցողակի թուելէ յետոյ զանազան ժամանակներ ու տեղեր գումարուած Գօնկրէները, ^{որոնք} յետոյ ասոնց ամեն մէկուն արժէքն ու կարեւորութիւնը, անցաւ Պրիսխէշի Գօնկրէին որ — շեշտելով ըսաւ յարգելի բանախօսը — , առաջին միակ Գօնկրէն է որ կը գումարուի Հայկական Հարցին համար:

Ահաւասիկ ճառին վերլուծումը. Հայկական Հարցին լուծման միջոցներն:

են 1) ներքին դիմադրութեան կազմակերպութիւնը 2) Եւրոպական պատեհ միջամտութիւն մը: Եւրոպական միջամտութիւն յառաջ բերելու համար, պէտք է հանրային կարծիքը շահիլ՝ մասնաւորապէս Փրանսայի մէջ:

Մամուլն է որ պիտի պատրաստէ հանրային կարծիքը, որովհետեւ Մամուլին ազդեցութիւնը մեծ է թէ՛ ժողովուրդին և թէ՛ կառավարութեան վրայ: Հայկական խնդրին առաջին շրջանին մէջ, անգլիական կառավարութեան համակրական դիրքը արդիւնք էր հանրային կարծիքին, զոր Լօնտոնի Մամուլը լուսաւորած էր, դէպքերու իրականութեան մասին. մինչդեռ Փրանսայի մէջ Մամուլը կարելի ըրած էր Մէլիքի դահլիճին որպէսզի Լօպանօֆի հայատեաց քաղաքականութեան ընկերակցէր:

Փրանսա կոչուած է սակայն վճռական դեր մը խաղալ հայկական հարցին լուծման մէջ, ազգելով Ռուս կառավարութեան վրայ, քանի որ Եւրոպայի ներկայ քաղաքական դրութեան մէջ անհնար է յուսալ որ Ռուսիոյ դէմ ընդհանուր նիզակակցութեամբ մը Արեւելեան խնդիրը լուծուի: Փրանսայի արեւելեան շահերը վտանգուած են Արեւելքի մէջ: Ուտի պէտք է որ համաձայնութեան մը յանգի Ռուսիոյ հետ և այդ համաձայնութեան գլխաւոր պայմաններէն մին պէտք է ըլլայ թուրքիոյ քրիստոնէից իրաւունքներուն երաշխաւորութիւնը: Բայց ասիկայ ա՛յն ատեն կըլլայ երբոր Փրանսայի ժողովուրդը երեւոյթիւն ընտրէ անոնք, որոնց ծրագիրը ոչ միայն գոհացում կուտայ ներքին քաղաքականութեան, այլ և Արեւելքի վերաբերեալ խնդիրներու մասին: Բայց ներքին չէ յուսալ որ խաղաղութեան ժամանակ երեսփոխան մը միջամտութեան առաջարկութիւն մը քուէարկել տայ: Կառավարութիւնը պարտի սպասել պա-

տեհ առիթի: Այդ առիթը՝ Յեղափոխութիւնը պիտի հայթայթէ զայն: Բարեախտարար Մակեդոնիոյ յեղափոխութիւնը կրնայ այդ առիթը ստեղծել: Արդ՝ Եւրոպա երբոր պաւքանեաններուն մէջ խառնաշփոթութեան մը հետեանքով ստիպուի զբաղիլ մակեդոնական հարցով, պիտի զբաղինաւ Հայկ. հարցով, հանրային կարծիքը նպաստաւոր ըլլալով: Ու այն ատեն Խորհրդարաններուն մէջ ուրան շատ ըլլայ հայաստէր երեսփոխաններու թիւը, այնքան աւելի հաւանականութիւն կ'ըստ որ Հայոց պահանջումները պաշտպանուին և ընդունուին: Ուրեմն մաղթելի է ոչ Պրիւքսէլի Գ. Նկրէէն յետոյ Մեծ Գօնկրէն գումարուի, Թուրքիոյ բազմը վճռելու համար:»

Տիար Ա. Ճիզվեանեան ուժգին ծափերու մէջ աւարտեց իր գեղեցիկ բանասիրութիւնը:

Տիար Գևորգի բեմ ելաւ, նիւթ ունենալով Հարենիին ու Յեղափոխութիւնը: Յարգելի բանաստօղ միշտ լարուած պահեց ներկայից ուշադրութիւնը, չարչարուող Հայրենիքին հառաչանքին հետ Ա. Յեղափոխութեան բոցեղէն շունչը դնելով իր յուզիչ ձառին մէջ, որ քանիցս ընդմիջուեցաւ ծափերով ու կեցցէներով:

Տիար Մ. Տաւադեան, Գեր. Նախագահին հրաւերով բեմ ելաւ և յանպատրաստից խօսեցաւ, մեկին ոճով, Գօնկրէին ու Հայկ. Հարցին վրայ: Հայկ. Յեղափոխութեան դէմ ուղղուած անիրաւ յարձակումները գատափետեց, գատապարտութեան խաւանը դրոշմելով բարբարոսութեան ճակատին: Յիշատակեց Չակաղիկը, ուր բնակող փոքր մը Հայերն ալ իրենց շնորհակալութեան հետագիրը կ'ուղղեն Գօնկրէին:

Բարձրաձայն կարգաց Միթիսիկին հետագիրը:

«Հայաստանի բարեկամներուն Միջազգային Գօնկրէին Նախագահին.

ՊՐՈՒՅԷԼ

Աղեհամարիոյ Հայեր Միթիկի գումարուած հայրենիքին հողը պանոզ իրենց եղբայրներուն անունովը, կը դրկեն իրենց արագին ողջոյնը Միջազգային Գօնկրէի համախմբուած, քաղաքակրթալ աշխարհին վեհանձն ու արի ներկայացուցիչներուն, որոնք կը հետա-

պրնդեմ սառապող Հայաստանին արժանաւոր ու արդար դասին յայրանակը:

Մարտին (1) որ ձեր ազնիւ ջանքեր պսակուին յաջողութեամբ ի պատիւ Մարտիրոսեան եւ ի փառս քաղաքակրթութեան:

Ազգ մը բովանդակ պիտի յաւիտեան երախտագէտ ըլլայ ձեզի:

Ապրի՛ ազգերուն եղբայրութիւնը:

Ապրի՛ն անոր մեծ առաքեալները:

16 Յունիս 1902 Արեւաանդրիա

ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՆՍՆՍՂԱՆ

Տգ. Ե.

Բարողիմէոս Վրդպ. Չերուկի

Սրանը թնդաց որոտագին ծափերով, որոնք յաճախ ընդմիջեցին համակրելի բանասիր :

Յետոյ Տիար Մ. Տանասեան սրտաշարժ կողմ ուղղեց ներկաներուն անձնուիրութեանը, առատաձեռնօրէն մասնակցելու համար Միքիկիին ու հետագորին անհրաժեշտ ծախքերուն :

Նոյն կոչն ըրաւ Տիար Վահրաւ, շեշտելով օգտօրէութեան դնացող մեր ջոջերուն բացակայութիւնը եւ յիշեցընելով ժողովուրդին պարտականութիւնը մեր կենսական դատին հանդէս:

Բանաստեղծութիւնները վերջացած, բեմ կեղաւ Գեր, Նախագահը, Փոնուզի Առիւծ ախտոսին իրաւամբ արժանի Հ. Բարթող թագաձեան. իր վեղձուկ պերճաստեղծութեամբ ցնցեց հոգիները, յուզեց բոլոր սրտերը, եւ փակեց Միքիկիը հոգեշունչ պահպանիչով մը:

Երկսեռ բազմութիւնը մեկնեցաւ սրահէն ու օթեակներէն, հետը տանելով Մեծ Միքիկիին քաղցր յիշատակը, ապագայի սուկեզօժ յոյսերովը համակուած :

Թատրոնի գուռը գրուած 2 պնակներուն մէջ նետուած կամաւոր նուէրներէն գոյացաւ 8 ոսկիի մօտ գումար մը: Նոյն գիշերը քաշուեցաւ հեռագիրը :

Ք Ր Ո Ն Ի Կ

— ԶԱՎԱԶԻԿԻ ՀԱՅԵՐԸ մեզի կը հաղորդեն Պրիւքսէլի Գօնկրէին ուղղած իրենց հեռագիրը. «Հայասիրաց հանսժողով, Պրիւքսէլ. Զակազիկի հայ գաղթականութիւնը խորապէս յուզուած իր Մայր-Հայրենիքի

(1) Կիլիկիցի ծերունի Տ.Գալքազնեանի գիտողութեամբ երանի՛ քեն՝ Մագրենի Ծ. Խ.

սառապանքին վերջ մը դնելու մտք վեհագի Եւրոպացիներու կողմէն կատարուած ջանքերէն, կը յայտնէ իր ջերմ երախտագիտութիւնը: »

Ապրի՛ն Զակազիկի մեր հայրենակիցները. . . :

— ԽՆԴԱԿՅՈՒԹԻՒՆ. Տիար Օճեկի Թաշնեանի ընդ Օր. Հայկանոյ ճիւղի վերջնական ամուսնութեան արարողութիւնը կատարուեցաւ ամսոյս 13ին Կիրակի իրիկուն ժամը 9ին, Լեպեկ թաղի Էնրաւ լուսանկարչատան կից բնակարանին մէջ, ի ներկայութեան երկսեռ ընտրեալ բազմութեան մը:

Տիար Օննիկ Թաշնեան համակրելի դէմք մ'է տեղիս ընկերային շրջանակին մէջ եւ ծանօթ է իր պարկեշտութեամբ եւ աշխատասիրութեամբ, որուն շնորհիւ այսօր կը վարէ իր սեպտական լուսանկարչատունը Էնիւրաւ:

Իսկ Օր. Հայկանոյ, մին է քիչ թէ շատ զարգացած եւ դաստիարակուած Հայուհիներէն, որոնք բարեկերթ ու ճշմարիտ մայր ըլլալ կը խոստանան:

— ՏԻԿՐԱՆ ԵՐԿԱԹԻ Բ. եղբայրը Տիար Մարտիրոս Պիլեզիֆնի, որուն արձակուրդով Յունաստան ուղեւորելը գրեցինք արդէն, համակրալիք ընդունելութիւն գրուած է Աթէնքի մէջ, Ողբացեալին մեծանուն բարեկամներուն քով: Յունական կարեւոր թերթերը ծանուցած են անոր ժամանակը:

Այս առթիւ կը ծանուցանենք Փիլիպի Պատ. ընթերցողներուն թէ՛ Տիգրան Երկաթի կենսագրութեան հրատարակութիւնը, — որ դադարած է ժամանակէ մ'ի վեր — պիտի վերսկսինք Տիար Մ. Պիլեզիքի վերագրածին:

— Կ. ՊՈԼՍԷՆ ամսոյս 14 թուականով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սուլթանը՝ Երլազ Բէօզկը պոսոյս ըրած ասեն՝ դիտեց գերուհի մը որ իրեն կը մօտենար վրան յարձակելու գիտումով: Սուլթանը ճիշտ արձակեց, վրոյս հասան պահապաններն ու ձերբակալեցին կինը:

Որովհետեւ այս կինը կը ծառայէր Ազիզի սրբիներուն, Եուսուզ Իզզէսսիկի ու Մեհիսի, լրտես ստիկանները ընկեցին այս երկուքը: Կնոջ վրայ գտնուեցաւ խոշոր գնդասեղ մը, որով կը կարծուի թէ Սուլթանը պիտի սպաննէր:

— ՎԻԳՔՕՐ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ԲԷԹԵՐՍ պուրկ այցելութեանը քաղաքական մեծ

նշանակութիւն կը տրուի եւրոպական մա-
մուլին կողմէն ու գիւանագիտական շրջա-
նակներուն մէջ, ի մասնաւորի Արեւելեան
Խնդրին նկատմամբ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Է Ս Թ Ո Ւ Է Ս Թ Ի

Բարից 25 Յունիս 1902

Ե Գ Ո Ւ Ա Ր Գ Է Ի Ի Մ Ա Ս Ի Ն

Տը Թէպ անուշով տիկին մը, ասկէ
տասը տարի առաջ Եգիպտոսի թագա-
ւորին — այն ժամանակ Կալլէսի իշ-
խան — ձեռաց գիծերը քննելով ըսած
է եզեր թէ թագաւորը չի պիտի թագ-
գնէ, այսինքն թագադրութեան հան-
դէսը չի պիտի վայելէ. . . : Ասկէ զատ
նոյն կիներն ըսած է նաև թէ Եգիպտոսի
իւր աղիքներէն պիտի մեռնի, այսին-
քնն աղիքներու հիւանդութենէ մը. . . :
Այդ տիկինը քանի մը ամիս առաջ
ըսած է եզեր թէ Եգիպտոսի թագաւո-
րին թագադրութեան հանդէսը յետա-
ձգուած է և բացազանչեր է ըսելով.
«Մարիսիս! լաւ կընէ (թագաւորը) ե-
թէ մի չիչ աճապարէ. . . :»

Ասոր վրայ աւելցնելու է նաև
անգղիացի համբաւաւոր Հայր Մուրի
օրացոյցին գուշակութիւնները: Յայտ-
նի է թէ այդ Արեւնախը կը հրատա-
րակուի յետոն տարիներէ ի վեր եւ
խիստ յայտնի է իւր գուշակութիւննե-
րով և մարգարէութիւններով մասնա-
ւորապէս Անգղիոյ եւ ընդհանրապէս
Եւրոպայի մէջ: Արդ՝ յիշեալ ծերունի
Մուրն իւր Ալմանախին մէջ (1902
թուականի) կը նախագուշակէ թէ Եգ-
ուարդ թագաւորի թագադրութեան
օրը մեծամեծ գժբազդութիւններ տե-
ղի պիտի ունենան, սարսափելի փո-
թորիկ մը տեղի պիտի ունենայ նոյն-
իսկ թագադրութեան օրը, փորձ մը
պիտի լինի թագաւորը սպաննելու, և
թէ թագաւորական արիւն պիտի հո-

սի. . . և ուրիշ ասոնց նման տագնա-
պեցուցիչ գուշակութիւններ կամ մար-
գարէութիւններ:

Արդեօք հաւատալու է այս շա-
րագուշակութեանց:

Աթէնքէն 23 Յունիս թուով այս
առտու մեզ հասած հեռագիր մը կըսէ
թէ Աթէնքի մէջ ձերբակալուած են
հինգ հոգի՝ Նաուս Ռուքաս, Պօրիա-
տիս, Քարալամպոս Ռալիս, Մասթրօ
Խրիսթոս, Ուլունօֆ, որոնք Մակեդո-
նական կոմիտէին կը վերաբերէին եւ
Սարաֆօֆի մարդիկն էին: Ասոնց նպա-
տակն է եզեր յոյն տարրը ոչնչացնել
Մակեդոնիոյ մէջ, սպաննել Յունաս-
տանի թագաւորը և ստիկանապետը:
Միայն այդ հինգ անձերը կրցած են
ձերբակալել, միւսները կրցած են
փախչիլ: Այդ գողտի ընկերութիւնը
մեծաւ մասամբ Բուլկարներէ բաղկա-
ցած, ճիւղեր և մասնաճիւղեր հաս-
տատած է եզեր Յունաստանի գլխա-
ւոր կեդրոններուն մէջ:

Բարից 2 Յունիս 1902

Ա Լ Բ Ա Ն Ի Ա. Այլոն. (Էսք Ռէսքի
յատուկ թղթակիցը խիստ երկար նա-
նակ մը գրած է գործակալութեանս,
մենք միայն անոր կառուար մասերն ա-
ռա՞յ կը բերենք) — Ալբանական Կօ-
միտէի կատարած սպանութիւններէն
գրգուած զինուորական կառավարիչը
(Այլոնի) որոշեց տեղիս գլխաւոր Պէ-
յերուն — ձէմալ պէյ և Համտի-Խան-
պէյ — տուները պաշարել և խուզար-
կել: Ձէմալ-պէյի տունը գտան բա-
ւական վտանգաւոր թղթեր և թեր-
թեր, իսկ Համտի-Խան-պէյի ապա-
րանքին մէջ գտան պաշտօնական տօ-
գումէնտներ և Կօմիտէի կնիքը. այստեղ
գտան նաև Տօն Ալաբրօ Գասթրիօթի
իշխանին մի պատկերը՝ գահի վրայ
բազմած, պատկերին վերի կողմը կը
գտնուի եզեր ալբաներէն և լատինե-
րէն լեզուներով «Անկցի՛ արիւնարբու

Սուլթանը! Կեցցէ ազատութիւն, կեցցէ Ալբանիոյ իշխանութիւնը, կեցցէ Գասթրիօթի իշխանը...» Ձինուորական հրամանատարը բոլոր ձեռք անցուցած թղթերը և իրերը Կ Պօլիս զրկեց, իսկ երկու պէյերը բանտ զրկեց. բայց ճանապարհին Ալբանացիք յարձակում գործելով ձէմալ-պէյն ազատեցին զօրքերու ձեռքէն: Աւրիշ Ալբանացիներ զինուելով գացին Համսի-պէյն ալ ազատելու, բայց արդէն զայն բանտի խորն նետած էին: Ասոր վրայ զայրացած սկոան քաղաքին ամէն կողմերը պատիլ, ժողովուրդը զէնքի հրաւիրել, և խանութները գոցել տալ, տասը վայրկեան չանցած բոլոր կրպակները գոցուած էին և չորս հազար Ալբանացիներ վազեցին հրամանատարին տան վրայ, զայն սպաննելու եւ Համսի-պէյի անարգար բանտարկութեան վրէժը լուծելու: Սակայն անկարելի էր հրամանատարը գտնել, Ալբանացիք պալատին դռները շախմախելով ներս մասն եւ մէկ քառորդ ժամ հրացանաձգութիւն տեղի ունեցաւ, որ ժամանակ հրամանատարի պառաւ զօքանջը և աղախին մը սպաննուեցան: Յետոյ քառասուն Ալպանացիներու երգում ընել տուին որ պալատի մէջ սպասն հրամանատարի երևնալուն, և զայն տեսածնուն պէս ձերբակալելով չուկայ բերնի որպէս զի այնտեղ կախն զայն: Հրամանատարը փախած է քաղաքէս, անոյ վերադառնալուն վրայ յոյս չի կայ: — Ալպանացիք սաստիկ զայրացած են այս միջոցիս, մանաւանդ այդ հրամանատարը մի քանի օր առաջ բաւական թուով քրիստոնեայ և մահմետական մեծամեծներ ալ ձերբակալելով բանտարկած էր:

Տանուս Մահմուտ փաշա. (Երեք օր առաջ հետեւեալ զարմացուցիչ թղթակցութիւնն ստացանք զոր կը համառօտենք): Ժրնէվ — Մինչ Տամատ Մահ.

մուտ փաշա Պօնէն երկաթուղով կերթար Լուչէոն, գերմանացի ոստիկան մը իւր կառքը մտնելով ըսաւ թէ իւր կառավարութենէն հրաման ստացած էր փաշային վրայ հսկելու, որովհետև Սուլթանի հրամանով մէկը պիտի սպաննէ եղեր Տամատ փաշան: Ոստիկանը մինչև սահմանագլուխ առաջնորդեր է թուրք փաշան: Կըսուի թէ այդ սպաննութիւնը կատարելու պաշտօնը յանձնուած է եղեր Հալէպի նախկին կառավարչի որդուն, որ Գերմանիա եկած է իւր զինուորական կրթութիւնը կատարելագործելու պատրուակաւ!!!: — Միթէ:

Բարից 5 Յուլիս 1902

ԲՕՍՆԻՍ. ՀՆՐԱՅԿՈՎԻՆԻ ԽՆԴԻՐԸ

Գիտէք թէ Սերբիայի և Մօնթէնէկոյի միջեւ երկիր մը կայ որ իւր յատուկ կառավարութիւնն ունի և մասնաւոր կառավարիչը, տեսակ մը կէս-ինքնավար պետութիւն մը որուն Բօսնիա-Հերձեկօվինա անունը կուտան: Մօտ 25 տարիներէ ի վեր այդ երկիրը որ այսօր մէկ միլիոն 600 հազարէ աւելի բնակչութիւն մը ունի, կը գըտնուի Աստրօ-Հունգարական կայսրութեան գերիշխանութեան տակ, ճիշդ գրեթէ այնպէս ինչպէս Սամոս կղզին կը գտնուի Սուլթաններու գերիշխանութեան տակ: Բայց ի՞նչպէս պատահեցաւ այս բանը, ե՞րբ և ի՞նչ առթիւ այդ երկիրն Աւստրիոյ ձեռքն անցաւ, կարժէ այդ մասին մի քանի խօսք ըսել մանաւանդ որ քանի մը ժամանակներէ ի վեր Հապսպուրկեան ցեղը կարծես որոշած է այդ երկիրը վերջնականապէս իւր կայսրութեան հետ միացնել և անոր անբաժանելի մասն համարել:

— Թուրքերը՝ Ասիայի խորերէն արշաւելով դէպի արևմուտք, արդէն շատոնց ի վեր տնկուած էին Եւրոպան

Ասիայէն բաժնող կեդրոնը՝ Կ. Պօլսոյ մէջ, և շնորհիւ իրենց, ո՛չ թէ ասպետական այլ ասպատակական ոգուն, հրոյ և սուրի զօրութեամբ, տիրեր էին Ասիոյ և Եւրոպայի մէկ կողմեր մասին: Այդ պաշի—պօղուքներուն ձեռքն անցնող երկիրները և ժողովուրդները, նոյն իսկ այս աշխարհիս վրայ կը քաւէին — և կը քաւէին գեռ անոնք սրք տակաւին հպատակ են այդ հուզվածար ցեղին — ո՛չ միայն իրենց մեղքերն այլ և իրենց հայրերուն և հաւերուն և հաւերուն հաւերուն մեղքերն ալ, թուրքերու վերջին զօհերն էին (1878) կոշա բայց օրթոսոֆս և սրաւ բուլղարները: Անգլիոյ զաւակ՝ անցեալ դարու աւհնամեծ մարդասէրը՝ «իրէադ օյս մաւն»ը՝ Կլատտան իւր առիժի ձայնը բարձրացուց ի նպատո Բուլղարներուն, արար աշխարհ սարսեցաւ անոր մոնչիւնէն, Մեծ Մերունւոյն ձայնը՝ ծովերու ալիքներու մէջէն, լեռներու գագաթներէն անցնելով, հասաւ Ռուսոց զատարար կայսեր ականջը, որ կարծես այդ արձագանքին կը սպասէր. . . . Յանուն քրիստոնէութեան. . . . Ռուս բանակներ Եւրոպայէն և Ասիայէն խուժեցին թրքական հողին վրայ, քիչ մնաց ամբողջ թուրքիան սուլդանի ձեռքէն ելլէր: Ռուսները Կ. Պօլսոյ դուռը հասած՝ իրենց կամքերը, իրենց հրամանները կատարել կուտային Սուլդանին. . . . Փատիշահի ներկայացուցչները կամայ ակամայ կնքեցին Սան — Ստեֆանօի դաշնագրութիւնը, որով Սուլդանը կեդրոնական Ափրիկէի արքայիկներու կարգը կը դասուէր. . . .

— Աշխարհն սուղած էր, բայց Անգղիա և Գերմանիա չէին քնացած, մինչ Անգղիա սուսիկ փուսիկ իւր գործը կը կատարէր Սուլթանի հետ, անգին երկաթի մինիստրը նոր մեքենայութիւններ կը լարէր: Ռուսիա թուրքիայէն կընդունէր, ի միջի ալոց,

Բուլղարիոյ անկախութիւնը, որով Պաւլքանեան թերակղզոյն տէր կը դառնար: Պիզմարք ուղեւով մէկ կողմէն՝ Պաւլքաններու մէջ Ռուսոց հակառակորդ մը մտցնել և այսպէս Վիէնայի և Ս. Բեգրպուրկի վարչութիւններն իրարու հետ գժտեցնել, միւս՝ կողմէն՝ ուղեւով Աւստրիան Գերմանիոյ կողմը քաշել, Բօսնիա Հէրձէկովինն Աւստրիային ընծայեց: Այս տիրապետութեամբ, Աւստրիա պաւլքանեան Սլաւ ցեղերը կը բաժնէր, որոնք եթէ միանալու լինէին կրնային զօրաւոր ազգ մը կողմել, այսպիսով Աւստրիա կեդրոնական Եւրոպայէն դէպի արեւելք կ'անցնէր և իւր երկաթուղիներու շնորհիւ, քայլ առ քայլ, կարող էր առաջանալ դէպի Եւրօպա և մինչև Սալոնիկի նաւահանգիստը. . . .

Սակայն Աւստրիոյ զօրավարները մեծամեծ գժտաբուլթիւններ կրեցին այդ երկրին տիրելու, հարիւր հազար զինուորներէ բաղկացած բանակ մը հազիւ կրցաւ այդ լեռնականներուն և գիւղացիներուն յաղթել, հինգ հազար աւստրիացիներ գետին տապալեցին Բօսնիայիք հպատակելէ առաջ. . . . Վերջնական հպատակութիւնը շատ երկար ժամանակի կարօտ եղաւ սակայն, 1882 ի ապստամբութիւնը պատահեցաւ երբ Աւստրիա ուղեց որ զինուորական ծառայութիւնը պարտաւորեցուցիչ լինի բոլոր Բօսնիացիներուն: Ահա այսպէս Բօսնիա—Հէրձէկովինն անցաւ Աւստրիոյ գերիշխանութեան տակ, ուր գրուեցաւ իւր կառավարիչ Բարոն տը Քալլէյ, որն՝ առաջնակարգ քաղաքագէտ և նշանաւոր կառավարող կրցաւ քիչ ժամանակի մէջ երկիրը բարեկարգել, երկրագործութեան մեծ ուժ տալ, որով բնակչութեան ինը տասներորդը կ'ապրի, այնտեղ մտցնել նոր էնտիստորիաներ որոնք բնաւ գոյութիւն չունէին իրմէ առաջ, երկաթուղու գիծեր հաստատել և որ գլխաւորն է, ժա-

զովուրդը կրթեց և դաստիարակեց. բան մը որուն վրայ Թուրքը չէր մտածեր իսկ, երբ մտածենք թէ 1875 ին ամբողջ Բօսնի-Հէրձէկօվինի մէջ մէկ հաս տպարան գոյութիւն չունէր. մինչդեռ այսօր մի քանի թերթեր լայս կը տեսնեն այն տեղ — նոյն իսկ թուրքերէն թերթ մ'ալ Վարաճ (Հայրենիք) անունով — և դպրոցները լինն են մանուկներով և ուսանողներով, կը հասկնանք Բօսնիան Աւստրիոյ ազդեցութեան տակ, 20 տարուան մէջ, ահագին առաջընթացութիւններ րբեր է քաղաքակրթութեան և լուսաւորութեան շարունակ մէջ: — Բօսնիա-Հէրձէկօվինի բնակչութեան մեծամասնութիւնը բազկացած է Սերպերէ. երեք գաւառութեան կը հանդիպիք այնտեղ մահմետական, Օրթոտոքս և Կաթօլիկ Մահմետական տարբեր ժե և ժՁ ըզգարերէն ի վեր գոյութիւն ունի, որ ժամանակները բազմաթիւ Սերպեր խմբով մահմետականութիւնը ընդունեցին — անշուշտ բռնութեան տակ — իրենց ասպատակութիւնները Սուլթաններու ներողամիտ աչքերուն առջև անձըրդով կաշարելու և կատարեցին ալ մինչև Աւստրիոյ գալը: Տեղացի Պէկերը — ճիշտ Հայաստանի շատ մը գաւառներու մէջ գտնուողներու նման — բռնելով լեռներն ու կիրճերը, ահ ու սարսափի մէջ կը գնէին տրկար ժողովուրդը. անցորդներէն հարկ և տուրք կ'տանէին, իրենք կը կատարէին երկրին արդարութիւնը, կը դատէին իրենց հասկցածին պէս, կ'արգարացնէին և կը դատապարտէին: Քաղաքներու մօտ կը գտնուէին ծառեր — դեռ մինչև օրս Բօսնիա-Սերպի մայրաքաղաքին մօտ կը ցուցնեն ծառ մը — որոնցմէ կը կախէին դատապարտեալները, որոնց ամենամեծ յանցանք էր՝ շատ անգամ իրենց ինչքերն, հարստութիւնն ու պատիւը պաշտպանած լինելնին !! Այդ պէկերու կողմէն ե-

լած գոյութիւնը, աւազակութիւնը, բռնաբարձութիւնը, լլկումը, հրկիզումը, բռնի գրաւումը և թալանը շատ ու սահման չունէին, իսկ սպանութիւնները «ջի ճաւթալ» էին դարձեր...: Այս պէկերն էին որ ամենամեծ դժուարութիւններն հանեցին Աւստրիոյ տիրապետութեան դէմ: Արջ օչհասականք հզորագոյնս կռուին ըսուած է. այդ բռնակալները կը տեսնէին որ օտարը կուգայ իրենց ձեռքէն իրենց հացըն առնելու, յավիշակելու. կենաց և մահու, հացի խնդիր դարձաւ այդ պատերազմը և ահա ասոր համար ալ Աւստրիա այնքան դժուարութիւն քաշեց այդ երկրին տիրելու:

— Մինչև այսօր Բօսնիա-Հէրձէկօվինը տեսակ մը ինքնավար պետութիւն էր, հիմա Աւստրիան կուզէ այդ երկիրը բոլորովին իւր կայսրութեան հետ կցել. ինչո՞ւ:

Պատճառներ շատ կան բայց հետեւեալն ամենաշնչիններէն մին չէ, և մենք այս պատճառը մասնաւորապէս առաջ կը բերենք, որովհետև այդ մասին ամենաապահով և ամենաընդարձակ տեղեկութիւններն ունինք և մի քանի ազբիւրներէ, այսինքն տեղացի մահմետական և քրիստոնեայ անձնաւորութիւններէ, որոցմէ ոմանք հակառակ են և ոմանք նպաստաւոր այդ միացման:

Արդէն յայտնի է Սուլթան Համիտի հնարած համիտլաժութիւն կոչուած կատակերգութիւնը. Սուլթանը փորձեր ըրաւ և շարունակ կընէ Ալճէրիայի, Թունուզի, Եգիպտոսի, Կովկասի, Հնդկաստանի, Չինաստանի, Պարսկաստանի, մի խօսքով բոլոր աշխարհի մէջ գտնուող մահմետականներն իւր հովուական ցուպին տակ հաւաքելու իբր «Հաւատացեալներու Խալիֆա». բայց Համիտ իւր առաքեալները կը զրկէ մասնաւորապէս այն երկիրներու մէջ որք ժամանակ ին իւր տիրապե-

տութեան տակ կը գտնուէին. և ասոր համար Բօսնիա իւր փրօփականտին զլիսաւոր կեդրումը դարձուցեր էր. . . . Բօսնիացի մահմետականները բաւորովին Սուլթանի կողմը դարձան, սպասեցին որ Համիտ բան մը ընէ և զիրենք ազատէ Աւստրիոյ ճիրանէն, շատ յուսացին, շատ սպասեցին, սպասելով «աչքերնին մոզ բուսաւ.» բայց բան մը չի պատահեցաւ. . . . Բօսնիացիները ճարահատեալ ինքզինքնին երիտասարդ թուրքերու գիրկը նետեցին կարծելով որ իրօք այդպիսի կուսակցութիւն մը կայ և որը հեռուէն իրենց երեւակայութեան, իրենց մտքին մեծ՝ ահագին ուժ մը կ'երևէր, դարձեալ ս'յսան յուսալ, հաւատալ, սպասել. ահագին գումարներ հաւաքեցին և զրկեցին Բարիզ, Լոնտոն և ժընէվ ուր մի քանի պաշտօնի չըպչագներ առանց կրթութեան, առանց գաղափարի, առանց ծրագրի սկսած էին թերթեր հրատարակել. . . . այդ թերթերը կը մտնէին ազատօրէն Բօսնիա, կը կարդացուէին, բայց որովհետև աւստրիական կրթութիւն ստացող Բօսնիացիներն այդ թերթերուն մէջ միայն պարապութիւն և բնայնութիւն տեսան, միայն հայհոյանքներ և լուտանքներ տեսան, միայն իրար չի բռնող նախադասութիւններու հանդիպեցան, սկսան երիտասարդ թուրքերուն ինչ լինելն ալ հասկընալ, տեսան որ անոնցմէ ալ յոյս չի կայ. . . . Գործակալութիւնս Բօսնիացիներու մի քանիսին այցելութիւնն ունեցաւ, որոնք իրենց ցաւերը պատմեցին և մեզ իմացուցին իրենց տատամսեալ վիճակը. . . .

Բայց Աւստրիան այլ ևս աչքը

բացած է, տեսած է և կը տեսնայ եզած շարժումները և կուզէ իր անդամ ընդ միշտ անոնց առաջքն առնել:

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

Լ Ո Ր Ք Ը

Պրիստի 18 Յուլիս

Հայասէր Գօնկրէն որդեգրեց բողձանքը թէ՛ Եւրոպայի պատիւին համար՝ ժամանակն է գործադրել տալու Պերլինի Դաշնագրը, որով Թուրքիան պարտադրուած է սպասուել Հայերուն կեանքերն ու ինչքերը (ՀԱՎԱՍ)

ԳՈՂ ՄԺԳՈ

Գարառական կեանքէն

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՑ

Ընդ մաշով է այս վէպը, որ մօտերս պիտի լոյս տեսնէ Արախ տպարանէն: Բաժանորդագրուիլ փափագողները 5 զրշ.ի նամակադրոշմ կրնան զրկել Փիլեիկի հասցէին:

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, իՍԻՍ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

